հովանավորությամբ վերանորոգվում է Հայաստանի նշանավոր միջնադարյան վանքերից մեկը՝ Հաղարծինը:

«Մեր օրհնություններն ենք բերում ձեր առաքելությանը եւ մաղթում հաջողություններ: Թող Աստված պահի պահպանի խաղաղության մեջ Արաբական Միացյալ Էմիրությունները, ապրվածասեր նրա ժողովրդին եւ բարեկամությունը երկու երկրների», - իր խոսքում նշեց Նորին Սրբությունը:

Հանդիպման ավարտին հյուրերն այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարան եւ ծանոթացան հայ հոգեւոր մշակույթի գանձերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՆԱԽԱՆԳԱՊԵՏԻՆ

Նոյեմբերի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ծայրագույն Պատրիարքն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության Արեւմտյան Ատրպատականի նահանգապետ Վահիդ Ջալալզադեի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանում ԻԻՀ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Ալի Սաղայանի եւ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի: Պատվիրակությունը Հայաստան է ժամանել Արմավիրի մարզի հետ տնտեսական համագործակցության շուրջ խնդիրները քննարկելու նպատակով:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ Հայաստանի եւ Իրանի ջերմ ու բարեկամական հարաբերություններին՝ ուրախություն հայտնելով դրանց խորացման համար:

Վեհափառ Հայրապետը գնահատանքի ու շնորհակալական խոսք հայտնեց նաեւ Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին՝ իրանահայության նկատմամբ ցուցաբերած բարի վերաբերմունքի եւ աջակցության համար:

Նահանգապետ Վահիդ Ջալալզադեն իր շնորհակալությունը եւ ուրախությունը հայտնեց Հայաստանում, մասնավորապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գտնվելու համար: Նա շնորհավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին գահակալության 11-րդ տարեդարձի կապակցությամբ՝ բարի նշան եւ հիշարժան համարելով տարեդարձի օրերին իր այցելությունը Մայր Աթոռ: Մեծարգո նահանգապետն իր երախտագիտությունը հայտնեց նաեւ Հայ Առաքելական Եկեղեցուն՝ ի մասնավորի Նորին Սրբությանը՝ ԱՄՆ-ում Ղուրանի այրման դեպքերին քննադատական արձագանք տալու համար: Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցին անընդունելի է համարում այլոց սրբությունների նկատմամբ ցանկացած ոտնձգություն:

Հանդիպման ավարտին պատվիրակությունն այցելեց Մայր Աթոռի թանգարան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հիրապետությունն ընտրությունների վերաբերյալ